

...Ընկեր Մաթիկը եւ առաջնորդը նոյն ընդունելութիւնը գտան փոքր աւաններուն ու գիւղերուն մէջ: Որոնք յատուկ սեղան կը հանէին Կարապիթ չորպանիին, անոր փոքրիկ, բայց համով նուէրները ստանալով, հաճեւ ուրախ, ականջ տալով կարելի նորութիւններուն, ճերմակ ծովուն մերձաւոր կեալուրէն: Այս բառը, այդ ջոջ-աղաներու բերնին, ունէր փաղաքուշ երանգ մը, մտած ըլլալով իրենց բարքերուն մէջ: Բազմանիշներու ճակատագիրն է ատիկա: Նախա՞նձ. ատելութի՞ւն. թրքութի՞ւն: Ասոնք չեմ ուրանար: Բայց չեմ կրնար չծանրանալ չորպաճի Կարապետին աննման շնորհին, դէմքէ, ինչպէս լեզուէ: Հմայքը ձրի բառ է: Անոր լեզուն «անուշ էր աւելի, քան շաքարը»: Ասիկա Մաթիկին վկայութեամբը չէ, որ միայն կը հաստատուի: Լեռնային այդ ճամբորդութիւնները, իրենց կապուած անհամար վտանգներուն գնովը դէմքերուն համար թերեւս կը ճարեն սա անառարկելի հեղինակութիւնը, որ խառնուրդն է քաջութեան ու վստահութեան, ուղղութեան եւ բարութեան: Համեստութի՞ւնը: Աս ալ ձրի բառ է: Թուրքին հպատակ հայու սկզբնական հանգամանքը: Աս ալ ներելի է գուցէ խառնել այս յղացքներուն: Իրողութիւն էր, որ Գասապեաններու գերդաստանը բռնամահ սուգը չունէր իր յուշերուն մէջ: Կ'ըսեն, թէ նախանձին բուն շարժառիթներէն մէկը հպարտութիւնն է: Թերեւս: Ըսի, թէ ոչ մէկ Գասապօղլու զոհ չէր գացած հազարաւոր դաւերուն, կապերուն, որոնք ասկից երեսուն-քառասուն տարի առաջ ճամբորդութիւնը հոմանիշ կ'ընէին մահուան: ...: Գաւառէ գաւառ, խճուղիներու վտանգաւոր անցքերուն, ու այն տեղերը, երբ լեռները իրարու կը հիւսեն իրենց փէշերը, տարպանդներու պահակներ մեր զոյգին ընծայեցին լրիւ հիւրասիրութիւն: Զարմանալի մտերմութիւն մը, որուն գլխաւոր զսպանակը նոյնքան զարմացող յիշողութիւն մըն էր, այդ պահակները կ'ընէր անոր ընտանի: Գիտէր անոնց բոլորին ալ անունները: Ունէր իր բառը, ուրախակից կամ ցաւակից, տարի առաջ